

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

***Բանալի բառեր** – պատմաճարտարապետական կոթող, գերեզմանատուն, խաչքար, արձանագրություն, զանգակատուն, վերակառուցում, մատուռ, օժանդակ շինություն, գավիթ*

Յուրաքանչյուր պետության և հասարակության կենսագործունեության ու զարգացման հեռանկարների հիմքում առանցքային են մշակույթն ու արվեստը: Ազգի ինքնատիպության, նրա անկախության պահպանության և ամրապնդման գործում անառարկելի են պատմամշակութային արժեքները, որոնք ժառանգաբար փոխանցվում են սերնդից սերունդ:

Սույն աշխատանքը նվիրված է Լեռնային Ղարաբաղի մի շարք հուշարձանների և կոթողների ծագումնաբանական քննությանը: Այդ հուշարձանները, մեծագույն արժեք լինելուց բացի, վկայությունն են այն բանի, որ հազարամյակներ շարունակ այնտեղ ապրել ու արարել են մեր նախապապերը:

Մարտակերտը տեղակայված է Արցախի Հանրապետության հյուսիս-արևելքում, հայտնի է իր խստաշունչ բնությամբ, շրջապատված է անտառապատ ձորերով և բարձր լեռներով, Թարթառով ու Խաչենագետով: Այստեղ պահպանվում են կանգուն ու կիսավեր հարյուրավոր պատմաճարտարապետական կոթողներ, որոնք խորհրդանշում են ժամանակի նշանավոր վարպետների և հայ շինականի ստեղծարար ոգին:

Գանձասար: Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, Խաչենագետի ձախ ափին, բարձրաբերձ մի բլրի վրա է գտնվում Արցախ-Ղարաբաղ աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Գանձասարը: Վերջինիս մասին գրավոր առաջին տեղեկությունը հայտնում է Անանիա Մոկացի կաթողիկոսը (X դար)¹: Ըստ Մխիթար Գոշի՝ Գանձասարն առաջնորդարան էր և Խաչենի իշխանների տոհմական տապանատունը²: Խաչենի մելիքությունը (XV-XVIII դար) ձգվում էր Խաչենագետի հովտից մինչև Բալուջա գետը: Նստոց կենտրոնը Խոխանաբերդն էր (Թարխանաբերդ)³՝ հարակից բերդավանով³: Մեղրակ Բարխուդարյանը նշում է, որ Հասան-Ջալալյանն իր նստոց-ապարանքը կառուցել էր

¹ Տե՛ս **Բաղրամյան Ֆ.**, Գանձասարի շուքի ներքո, Վանք (պատմական ուրվագծեր. երեկ և այսօր), Ստեփանակերտ, 2018, էջ 5:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 10:

Վանքից ներքև՝ գետի ափին, և կոչվում էր դարպասներ: Դարպասները, որ նշանակում են ապարանքներ, եղել են Հասան-Ջալալ իշխանի նստավայրը, Խոխանաբերդի հոգևոր կենտրոնը, որից քիչ հեռու՝ Գանձասարի վանքի մոտ¹, տոհմական գերեզմանոցն էր:

Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսի (946-968 թթ.) «Յողագս ապստամբութեան տանն Աղուանից» գրության համաձայն՝ 949 թ. լուսավորչական-քաղկեդոնական վեճեր հարթելու համար ինքը՝ Անանիա կաթողիկոսը, Խաչեն գավառում ժողով է գումարում նշանավոր իշխանների ու հոգևորականների մասնակցությամբ: Պատգամավորների ցուցակի մեջ հիշատակված է նաև «Հայր Սարգիս Գանձասարոյ վանականը»²: Նրան իր աշխատության մեջ հիշատակում է նաև պատմագիր Ստ. Օրբելյանը³: Այս և այլ աղբյուրագիտական տեղեկությունները հաստատում են, որ վանքը կառուցվել է նախկին շինությունների տեղում:

Գանձասարի ճարտարապետական համալիրը հայ ժողովրդի բազմա-հարուստ մշակութային ժառանգության գանձերից է: Հայկական միջնադարյան ճարտարապետության և առհասարակ միջնադարի տարբեր հարցերի ուսումնասիրության ասպարեզում հայագիտության երախտավորներից է Անատոլի Յակոբսոնը: Հ. Օրբելու ղեկավարությամբ նա բազմիցս եղել է Հայաստանում և մասնագիտացել հայկական միջնադարյան արվեստի և ճարտարապետության բնագավառում: Որպես հնագետ նա մասնակցել է նաև Հայաստանում և Ադրբեջանում կազմակերպված հնագիտական մի շարք արշավների՝ ձեռք բերելով գործնական խորը գիտելիքներ և փաստական նյութ⁴: Վերջինիս կարծիքով՝ Գանձասարի վանքը ոչ միայն «ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է, մենք չենք կարող ցույց տալ որևէ այլ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»⁵: Իսկ ֆրանսիացի հայտնի պատմաբան, պրոֆեսոր Շարլ Դիլը Գանձասարը ներառել է հայ ճարտարապետական արվեստի հինգ գլուխգործոցների շարքում, որոնք իրենց ուրույն տեղն են զբաղեցնում համաշխարհային ճարտարապետության գանձարանում⁶:

Վանքի եկեղեցու շինությունը սկսվել է 1216 թ. և ավարտվել 1238 թ.: Նրա

¹ Տե՛ս **Բաղրամյան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 6:

² Տե՛ս «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի յողագս ապստամբութեան տանն Աղուանից» // «Արարատ», 1896, էջ 42:

³ Տե՛ս **Օրբելյան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 278-279:

⁴ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Անատոլի Յակոբսոն, հայ ճարտարապետության նվիրյալը // «ՊԲՀ», 1998, թիվ 3, էջ 111-112:

⁵ Տե՛ս **Якобсон А. Л.**, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.) // «Исследования по истории культуры народов Востока». (Сборник в честь И. А. Орбели), М.-Л., 1960, с. 151:

⁶ <https://armedia.am/arm/news/82225/gandzasar-hovhannes-mkrtchi-grigor-lusavorchi-surb-nshkharnern-ir-mej-ampopats-vanakan-hamalir.html> (15.03.2021).

արևմտյան կողմին կից գավթի հիմնադրման տարեթիվն անհայտ է, սակայն այստեղ գտնվող արձանագրության համաձայն՝ շինությունն ավարտվել է 1266 թ.: Կիրակոս Գանձակեցին գրում է, թե Հասան-Ջալալը «Շինեաց եկեղեցի մի գեղեցկագարդ յօրինուածով զմբեթարդ երկնանման տաճար ի փառացն Աստծոյ... Որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ ի տեղի շիրիմի իւրեանց և յովով ամս աշխատ եղեն ի նմա»¹: Գանձասարի կառուցման ականատես պատմիչի այս վկայությունը հաստատում են նաև այլ արձանագրություններ և մատենագրական աղբյուրներ: Այն, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին քաղաքական ու կրոնական հավաքատեղի էր Արցախի և շրջակա հայկական գավառների համար, արձանագրված է IX-X դարերի պատմական սկզբնաղբյուրներում:

Վանքը բաղկացած է եկեղեցուց և գավթից, որոնք այնպիսի մի ամբողջություն են կազմում, որ կարծես դրանք առանձին շինություններ չեն և կառուցվել են միաժամանակ: Վանական համալիրն ունի պարիսպներ, բնակելի խցեր, թաղածածկ սեղանատուն և դպրոցի երկհարկանի շենք:

Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցին Գանձասար վանական համալիրի գլխավոր կառույցի վայրն է: Այն ունի ներքուստ խաչաձև, արտաքինից ուղղանկյուն զմբեթակիր հորինվածք, որի չորս անկյունները զբաղեցնում են կրկնահարկ ավանդատները: Կոնսոլ աստիճանները տանում են դեպի վերին ավանդատները: Շինությունը հարուստ է նուրբ և վարպետորեն փորագրված պարուրաձև ու արմավազարդ հյուսված քանդակներով: Յուրաքանչյուր առաջաստի վերին մասում՝ անմիջապես գոտու տակ, տեղադրված են բարձրադիր պատկերաքանդակներ: Հարավարևմտյան առաջաստի վրա գտնվող քանդակը խոյի գլուխ է, հարավարևելյան և հյուսիսարևելյան առաջաստների վրա՝ եգնների գլուխներ, հյուսիսարևմտյան առաջաստի քանդակը նման է մարդու դեմքի: Ս. Լ. Յակոբսոնը նշում է. «Այս տիպի քանդակները, ըստ երևույթին, տարածված են եղել X դարում՝ Բագրատունիների ժամանակ»²:

Տաճարի անհայտ ճարտարապետի կերտած թմբուկը բաժանված է 16 նիստի, որոնց բարձրությունը ընդգծված է նաև զարդաքանդակների միջոցով: Յուրաքանչյուր նիստի կողերը շեշտված են բարձրադիր կիսասյուներով, որոնք ավարտվում են քանդակագարդ խոյակներով: Թմբուկի արևմտյան նիստերում քանդակված են երկու կտիտորների քանդակները, որոնք վեր բարձրացրած ձեռքերով բռնել են եկեղեցու մանրակերտը՝ տախտակի վրա: Հետազոտողների կարծիքով դրանք տաճարի կառուցման պատվիրատուներ Հասան-Ջալալ Դոլայի³ և նրա որդի Աթաբեկի արձաններն են: Այս

¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 269-270:

² Տե՛ս Якобсон А. Л., նշվ. աշխ., էջ 146:

³ Հասան-Ջալալ-Դոլայի ծագումնաբանության մասին առավել մանրամասն տե՛ս Ս. Հասան-Ջալալյան, XIII դ. Արցախի իշխանաց իշխան, թագավոր Հասան-Ջալալ-Դոլայի ծագումը և գործունեությունը // «Գիտական տեղեկագիր», պրակ 1, Ստեփանակերտ, 2016, էջ 179:

հանգամանքը պատահական չէր կարող լինել, քանի որ բավականին մեծ է եղել Հասան-Ջալալ Դոլայի դերը տարծաշրջանում: Մասնավորապես, նա շատ կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ իր կառավարման, դիվանագիտական և զորավարական տաղանդի, ձեռք է բերում գահերեցի կարգավիճակ: Իր կառավարած գավառի՝ Ներքին Խաչենի իշխանության տարածքին միացնելով անիշխան մնացած Հաթերք գավառի տարածքը՝ Հասան-Ջալալ Դոլան դառնում է Արցախի արդեն երկնյալ դարձած իշխանությունների (Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի) լիիրավ ղեկավարը¹, վիմագիր արձանագրություններում և ձեռագիր մատյաններում կոչվելով Արցախի արքա, թագավոր կամ իշխանաց իշխան²: Մեկ այլ նիստի ճակտոնապատի տակ փորագրված ֆոնի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է, իսկ լուսամուտի շրջակալի վրա՝ Ադամի և Եվայի պատկերաքանդակները՝ համապատասխան գրություններով:

Եկեղեցու *գավիթը* Հաղպատի սբ. Նշան եկեղեցու գավթի նման ներսից դահլիճ է՝ ծածկված զույգ հատվող կամարներով ու ստալակտիտային երդիկով: Գավիթը Հասան-Ջալալյան տոհմի տապանատունն է եղել: Այժմ դրա արևելյան մասում հանգչում են Հասան-Ջալալյան տոհմի նշանավոր մեծերը՝ Հասան-Ջալալ Բարեպաշտից ու հոգևոր հայրապետներից մինչև Բաղդասար միտրոպոլիտը: Վանքապատկան բնակելի և տնտեսական շենքերի, դարպասներով պարիսպների հետ Գանձասարը հայ ճարտարապետության լավագույն համալիրներից է:

1238 թ. Հասան-Ջալալն ավարտում է Գանձասարի վանական համալիրի կառուցումը: Հասան-Դոլան վանքին է նվիրում հողեր, այգիներ, արծաթյա սպասք՝ ծիսական արարողությունների համար: 1240 թ. տեղի է ունենում կաթողիկոսանիստ վանքի օծումը, որին մասնակցում էին աստվածաբաններ, գիտնականներ, Հայաստանից, ինչպես նաև Կիլիկիայից պատմիչներ, եպիսկոպոսներ և 700-ի հասնող քահանաներ³:

Գանձասարի վանքը մոտ 1400 թ. դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը: Այս վանքում կաթողիկոսների հետ հանդիպումներ են ունեցել XVI-XVII դարերի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Իսրայել Օրին և Հովսեփ Էմինը: 1546 թ. Սարգիս կաթողիկոսն ընդարձակել է վանքի կալվածքները, 1551 թ.՝ նորոգել եկեղեցին: 1898 թ. Անտոն վարդապետը վանքի արևելյան կողմում կառուցել է դպրոցի երկհարկանի շենքը, 1907 թ. նորոգվել են գավթի տանիքն ու զանգակատունը⁴:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 180:

² Դիվան հայ վիմագրության, պրակ V, Երևան, 1982, էջ 41, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցու, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 200:

³ Տե՛ս **Ким Бакши**, Духовные сокровища Арцаха, Москва, 2012, с. 67:

⁴ <https://armedia.am/arm/news/82225/gandzasar-hovhannes-mkrtchi-grigor-lusavorchi-surb-nshkharnern-ir-mej-ampopats-vanakan-hamalir.html> (15.03.2021).

1923 թվականից՝ Ադրբեջանին բռնակցվելուց հետո, Գանձասարի վանքը չի գործել: Ղարաբաղյան պատերազմի ընթացքում այն մի քանի անգամ հարձակման է ենթարկվել ադրբեջանցիների կողմից: Նրանք, ուղղաթիռներով ռմբակոծելով, ավերել են վանքի արևելյան կողմի շինությունները: Ասում են, երբ ռմբակոծվում էր վանքը, քահանան մնացել է եկեղեցում և ծնկի իջած անդադար աղոթել: Աղոթքի ժամանակ հրեշտակներ են հայտնվել սուրբ սեղանի երկու կողմերում և հայտնել, որ Աստծո կամքով վանքին ավերում չի սպառնում: Առկա են բազմաթիվ վկայություններ, որ հրեշտակների հետքերը մինչ օրս տեսանելի են սուրբ սեղանի երկու կողմերում: Արցախյան առաջին պատերազմից հետո Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին վերաբացվել է: 1992 թ. ԼՂ ներխուժած ադրբեջանական զինվորներն ավերել են վանքի արևելյան կողմի շինությունները, որոնք վերանորոգվել են 1993-1998 թթ.¹:

Այսպիսով, դարեր շարունակ վանքը եղել է Հայաստանի արևելյան գավառների հոգևոր և դպրության կարևորագույն կենտրոնը: Ընդհանուր առմամբ, վանական համալիրում պահպանվել են շուրջ 200 հայերեն արձանագրություններ:

Ադրբեջանական «IRS-Ժառանգություն» ամսագիրը² 2008 թ. հայտարարել էր մրցույթ՝ «Ադրբեջանի յոթ հրաշալիքները» խորագրով: Ընտրության համար ներկայացված էին պատմական հուշարձաններ, ու, ցավոք սրտի, նրանց մեջ էր նաև Գանձասարի վանական համալիրը: Կայքում նշվում է, որ Գանձասարը գտնվում է պատմական Քարվաճառի շրջանի Վանք գյուղում: Դարեր շարունակ վանքը ոչ միայն ծառայել է որպես Կովկասյան Աղվանքի (Ալբանիա) կաթողիկոսական նստավայր, այլև ալբանական Աղվանքի հայ իշխանների տոհմական գերեզմանոցը: Հիմնական շենքերը կանգնեցվել են XIII դարում: Այն բաղկացած է եկեղեցուց, դահլիճից և օժանդակ շինություններից: Ամբողջ համալիրը շրջապատված է պարիսպներով, մուտքերը երկու կողմից են՝ հարավից և արևմուտքից: Սկսած իր հիմնադրման շրջանից մինչև XIX դարը՝ Գանձասարի վանքը Կովկասյան Աղվանքի հոգևոր և մշակութային կենտրոնն է եղել³:

Եվ հայկական, և՛ ադրբեջանական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքանով են խեղաթյուրված իրականությունն ու պատմական փաստերը Ադրբեջանի կողմից: Խնդիրն այն է, որ մշակութային արժեք-

¹ Տե՛ս նույն տեղում:

² «IRS-Ժառանգություն» ամսագրի կայքը ստեղծվել է 2002 թ. ապրիլի 8-ին, որի գլխավոր խմբագիրն է Մուսա Մարջանլին: Ամսագրի նպատակն է ներկայացնել Ադրբեջանի տնտեսական և մշակութային կյանքը և այդ ժառանգությունը փոխանցել ապագա սերունդներին: Բացի այդ, ըստ խմբագրի, ապացուցված է ամսագրի պահանջվածությունը, հատկապես՝ Ադրբեջանի սահմաններից դուրս գտնվող իրենց հայրենակիցների շրջանում:

³ Տե՛ս Мой Азербайджан // <http://irs-az.com/new/pdf/090628194746.pdf> (05.11.2015): Պետք է նշել, որ այն փակվել է (հավանաբար միայն հայերի համար), սակայն գործում է ամսագրի ֆեյսբուքյան պաշտոնական էջը:

ները, որոնք պատկանում են հայերին և հայկական մշակույթի բաղկացուցիչ մասն են, աղբյուրները վերագրում են իրենց:

Դադի կամ Խութավանք: Ղարաբաղի և Մոսկվի լեռնաշղթաները միացնող լեռնահովտում է գտնվում Դադի կամ Խութավանքը: Դադի և Խութանունների ստուգաբանությունը հայ մատենագրության մեջ երկու կերպ է տրվում.

1. Կապված է ս. Թադևոս առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Դադիի կամ Դադոյի անվան հետ, որն Արցախում I դարում քրիստոնեություն է քարոզել և այստեղ էլ նահատակվել. «Դադին՝ մի երթանասնիցս, որ գնաց հրամանաւ Թադէի ի Մեծն Հայք կողմանս հիւսիսոյ, և լուծալ զմահն Աբգարու դարձաւ և եմուտ ի Փոքր Սիւնիք, և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեղաւ Դադի»¹:

2. «Խութ» բառը հոմանիշ է «բլուրին», հետևաբար «Խութավանք» բառացի նշանակում է բլրի վրա գտնվող վանք:

Մատենագրական սկզբնաղբյուրներում Դադի վանքն առաջին անգամ հիշատակվում է IX դարում. «...ի խորածորն, որ կոչի Դադոյի վանք»²: Մինչև XII դարը Դադի վանքի պատմության և շինարարական գործունեության մասին էական տեղեկություններ դեռևս հայտնի չեն, սակայն նույն դարի կեսին վանքն արդեն հորգևոր-մշակութային և քաղաքական խոշոր կենտրոն էր³:

Ժամանակին վանքը կողոպտեցին պարսիկները, ապա՝ արաբները, սելջուկները, իսկ հետագայում՝ օսմանյան թուրքերը և կրկին պարսիկները: Դեռ ավելին, դարերի փորձությունների միջոց անցած վանքը, XVIII դարից սկսած, աստիճանաբար զրկվում է իր հարստություններից և շրջակա տասնյակ հայկական գյուղերից, նույնիսկ սպասարկող բնակչությունից: Այդ է պատճառը, որ Սարգիս արքեպ. Ջալալյանցը XIX դարի մոտավորապես կեսին անբնակ ու խարխուլ տեսավ Դադիվանքը: «Այնոքիկ տեղիք դարան են ավազակաց և ասպատակաց Արցախ նահանգի»⁴:

Հայ ժողովրդի, մասնավորապես Խաչենի իշխանների՝ XII դարասկզբի պայքարը սելջուկյան իշխանության դեմ տալիս է իր արդյունքը, և նույն դարի կեսերից Արցախում դեռ վաղ միջնադարից հիմնավորված Առանշահիկ տոհմի հետնորդ իշխանները նորից որոշակի ինքնուրույնություն են ձեռք բերում: Սակայն իշխանությունն արդեն եռաճյուղ էր՝ Հաթերքցիներ, Ծաթեցիներ և Խոխանաբերդցիներ⁵:

¹ Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Յերուսաղեմ, 1871, հավելված, էջ 33:

² Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 340:

³ Տե՛ս Այվազյան Ս., Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ. // ՀՀՈւ գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԷ, Երևան, 2015, էջ 7:

⁴ Սարգիս արքեպ. Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիսի, 1858, էջ 222-224:

⁵ Տե՛ս Այվազյան Ս., նշվ. աշխ., էջ 8:

Վանական համալիրը գրեթե բաժանված է երկու մասի՝ պարսպից ներս գտնվող հիմնական և պարսպից դուրս գտնվող հարավային՝ լրացուցիչ շինությունների: *Հնագույն եկեղեցին* կամ միանավ բազիլիկը գտնվում է համալիրի հյուսիսային կողմում՝ զառիվայրի վրա: Հյուսիսային պատն ամբողջովին, արևելյանը՝ մասամբ թաղված են հողի մեջ: Հատակագիծը մի երկարավուն ուղղանկյունի է, առանց որևէ բաժանման: Դռները՝ հատկապես արևմտյան, արտաքինից քանդակազարդ են և ավելի են ընդգծում բազիլիկի գուսպ հարդարանքը:

Երկրորդ եկեղեցին հարավից կից է առաջինին: Սա համեմատաբար ավելի նեղ է՝ կարճ: Պատերը նույնպես շարված են անտաշ քարով և ունեն սրբատաշ քարերով երիզված որմնադարաններ: Բազիլիկի առանձին մասերի վրա նկատվող տարբեր շարվածքներից երևում է, որ եկեղեցին ենթարկվել է նորոգման:

Գավիթ-ժամատունը կիսաաշխարհիկ, կիսակրոնական նշանակության շինություն է, իսկ ճարտարապետական մտահղացմամբ ու կառուցվածքային սկզբունքով առնչվում է հայկական բնակելի տների (գլխատների) հետ: Այս հուշարձանը նույնպես դրսից անտաշ, ներսից սրբատաշ քարով կառուցված բարձր շենք է: Հիմնական դուռը հարավային կողմից է՝ երիզված քանդակազարդերով: Դռան աջ կողմում գտնվող արձանագրությունից երևում է, որ այն 1224 թ. կառուցել է Գրիգոր եպիսկոպոսը: Գավթի ներսի պատերի մեջ ագուցված են բազմաթիվ խաչքարեր: Գավիթ-ժամատունը դարեր շարունակ եղել է Վերին Խաչենի իշխանական տոհմի տապանատունը: Ներսից հատակը ծածկված է գերեզմանաքարերով, որոնց տապանագրերի մի մասն արդեն ջնջված է:

Արգու-Խաթունի կաթողիկե եկեղեցին գտնվում է վանական համալիրի արևելյան մասում: Տաճարը հիմնադրվել է 1214 թ. Հաթերքի մեծ իշխան Վախտանգի բարեպաշտ տիկնոջ՝ Արգու-Խաթունի ջանքերով: Կաթողիկեի ներսի կիսասայրուները և դրանք կապող կամարները սպիտակ և գորշ քարից են՝ զարդարված նուրբ քանդակներով: Ներսի պատերի ծեփը, որը տեղ-տեղ թափված է, ծածկված է վատ պահպանված որմնանկարներով: Առ այսօր մնացած նկարներից երևում են հայկական որմնանկարչության ավանդական ձևերը՝ գույների առատությունը, նկարելու պարզ եղանակը, նախշազարդումը, վառ արտահայտված արևելյան տիպի դեմքի պատկերումը¹: Դռանց կատարելությունը վկայում է, որ միջնադարյան Արցախում ստեղծագործել են հրաշալի վարպետներ, որոնք ոչ միայն տիրապետել են պատերը նկարազարդելու տեխնիկային, այլև գունավոր նկարներով ձեռագրեր պատկերազարդելու արվեստին:

¹ Дурново Л. А., Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 153-154.

Զանգակատունը գտնվում է համալիրի արևմտյան մասում: Երկհարկանի շինությունը կառուցվել է XIII դարի կեսին Դոփեանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի ջանքերով: Զանգակատան երկրորդ հարկը քառաայուն հենարանով մի գմբեթ է, որից հնում հավանաբար կախված են եղել վանքի զանգերը:

Բլրի հարավային թեքադիր լանջին է գտնվում Հասան Մեծի եկեղեցին՝ աղյուսաշեն գմբեթով, որի վեղարը քանդված է: Վերջինիս կից են Ժամատունը, Դադի վանքի հյուրանոցը, գործատունը, գրատունը, հնձանը, ձիթահանը, սրբատունը, միաբանական խցերը և այլ շինություններ: Վանքի պարիսպներից դուրս՝ մոտակա բլուրների վրա են գտնվում երեք փոքր մատուռներ՝ խարխուլ վիճակում:

Երիցմանկանց եկեղեցին կառուցվել է 1691 թ.: Եռանավ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցին կառուցված է սրբատաշ ու կոպտատաշ սպիտակավուն քարերով: Տաճարի գմբեթը բարձրանում է քառակուսի, խաչաձև չորս հոյակապ սյուների և դրանք իրար օղակող կամարների վրա: Եկեղեցին շինող ճարտարապետը Սարգիսն է, որի մասին արձանագրությունը գտնվում է ներսում՝ բեմի հյուսիսային կողմի պատին՝ «*Շինաւղ և վարպետ եկեղեցոյս ուստա Սարգիսն յիշեցեք ի Քրիստոս*»¹: Ներսում ընդարձակ դահլիճն է՝ վեր սլացող սյուներով, աղեղնաձև խաչվող կամարներով, թմբուկի խոշոր լուսամուտներով, կրկնահարկ ավանդատներով և տասնյակ մեծ ու փոքր խաչքարերով: Վանական տարածքում պահպանված բազմաթիվ բնակելի սենյակներն ու այլ կառույցները ևս վկայում են Երիցմանկանց վանքի միաբանության քանակի մասին: Վանականների կացարանները, մյուս օժանդակ դահլիճները որպես կանոն ունեն բուխարիներ, պատուհաններ: Սենյակների հաջորդ խումբը բաղկացած է իրար հաջորդող երկու ուղղանկյուն դահլիճներից: Երկրորդ՝ ամբողջովին հողի մեջ թաղված սրահի ձախ կողմում է գտնվում շրջանաձև մեծ դահլիճը՝ վեհարանը:

Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցին խոշոր չափերի ճարտարապետական հուշարձան է, որի ճակատները երեսապատված են տեղական սրբատաշ կաթնագույն կրաքարով: Համաձայն տաճարի հարավային դռան գլխամասում պահպանված արձանագրության՝ «*Շնորհիւ և ողորմութեամբ ամենագորին՝ Աստծոյ կառուցեալ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ և տրօք բարեպաշտօն ժողովրդեանց սուրբ Ամենափրկիչ եկեղեցոյն Ղազանչեցոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն ակսեալ 1868 ամի... աւարտեցաւ ի 1887 ամի...*»²: Փառահեղ գմբեթը հիմնված է չորս մույրերի վրա: Զարդաքանդակներ են արված ամենուրեք, հատկապես դռների, լուսամուտների կամարների վրա: Եկեղեցին ունի միատեսակ և նույն չափերի երեք մուտք՝

¹ Սարգիս արքեպ. Զալալեանց, նշվ. աշխ., էջ 171-179:

² Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 156:

արևմուտքից, հարավից և հյուսիսից, որոնց առաջ կառուցված են գեղեցկաշեն, բոլորաձև նախամուտքեր՝ երեքական դռներով: Նախամուտքերի միջին դռների վերևում բացվող փոքրիկ լուսամուտները խաչաձև են՝ սրբատաշ քարերով շրջանակված: Դռների վերնամասում, մեկ ամբողջական քարից կերտված շրջանակի ներսում, կան պատկերաքանդակներ:

Թմբուկին սլացիկ տեսք տալու համար 16 նիստերը մշակված են ուղղաձիգ համաչափություններով, իրար մեջ ներգծված պատուհան-որմնախորշերով, իսկ նիստերն իրենց հերթին վերևում ավարտվում են ճակտոններով, որոնց գազաթներից սկսվում են գմբեթի վեղարի ծավալի կողերը: Եկեղեցին վերանորոգելու ընթացքում, տաճարի հատակը մաքրելիս բացվել է մի կարևոր արձանագրություն, որով հայտնի են դառնում հուշարձանը կառուցող վարպետի և ճարտարապետի անունները (վարպետ՝ Ավետիս Եարամիշենց, ճարտարապետ՝ Սմիլոն Տեր Յակոբեանց):

Ղազանչեցոց եկեղեցուց փոքր-ինչ հեռու՝ նրա արևմտյան մասում, տեղադրված է եռահարկ զանգակատունը, որը 1858 թ. կառուցել է¹ շուշեցի Աբրահամ Խանդամիրյանցը: Դրա արևելյան պատին կա արձանագրություն, որտեղ նշված է. «Զանգակատունը Գաբրիել Յովսեփեան-Բատիբեանցի յիշատակին, ով Ղազանչից է, Մկրտիչ Մարգարեան-Խանդամիրեանցի, նրա կնոջ Բալասնի եւ որդիների Արուսե եւ Ստեփանե և բոլոր Ղազանչեցիների յիշատակին: Փառք Աստծուն, եւ թող փրկուեն բոլոր կենդանի եւ մահացածների հոգիները: 1858 թվականի ամառ»²:

Առաջին հարկի վերնամասի անկյուններում դրված են չորս քառակոփ, մարդահասակ արձաններ: Զանգակատունը կառուցված է սրբատաշ կաթնագույն քարով: Քանդակագործական արվեստի մի գեղեցիկ նմուշ է զանգակատան քարաշեն շղթան: Շուշիի հանդիսավոր ճարտարապետության ավանդույթները հայկական են. կառուցողական ձև ու ոճը տարածված են եղել ինչպես Արցախ-Ղարաբաղի, այնպես էլ հարևան Սյունիքի բնակավայրերում: Թե՛ բնակելի, թե՛ արտադրական և թե՛ հասարակական-մշակութային բնույթի կառույցները պարզ ու արտահայտիչ են և գալիս են հայկական մոնումենտալ ճարտարապետությունից³: Այս առումով հատկանշական է Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցին, որի կառուցման ժամանակ հայ շինարարներն օգտագործել են իրենց հին ավանդույթները և դրանով իսկ վերադարձրել գմբեթավոր կառույցների տիպը, որն ամենատարածվածն էր հայ ճարտարապետության նախորդ շրջաններում՝ VI-IX և XI-XIII դարերում:

¹ Տե՛ս Մկրտչյան Շ., Դավթյան Շ., Շուշի, ողբերգական ճակատագրի քաղաքը, Երևան, 2008, էջ 30:

²https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2_%D4%B1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D6%83%D6%80%D5%AF%D5%AB%D5%B9_%D5%82%D5%A1%D5%A6%D5%A1%D5%B6%D5%B9%D5%A5%D6%81%D5%B8%D6%81_%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80_%D5%BF%D5%A1%D5%B3%D5%A1%D6%80#cite_ref-shahen_1-1.

³ Մկրտչյան Շ., Արցախի զանձերը, Երևան, 2000, էջ 23:

Ամարասի եկեղեցին Լեոնային Ղարաբաղի տարածքում գտնվող բոլոր հուշարձանների մեջ առանձնակի տեղ է զբաղում: Այն անմիջապես առնչվում է Արցախում և Ուտիքում քրիստոնեության տարածման նախապատմության հետ, իսկ հետագայում միշտ եղել է Մարտունու շրջանի հոգևոր-մշակութային եզակի օջախներից մեկը: Ըստ հայ հին մատենագրության՝ հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը՝ IV դարի սկզբին, իսկ ավարտումը կապված է նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսի անվան հետ: V դարում՝ հավանաբար Վարդանանաց պատերազմի օրերին, այն ավերվել էր: Պարսից մոլեռանդ մոգերը թույլ չէին տա, որ իրենց երկրին այդքան մոտ գոյություն ունենար քրիստոնեություն բոլորքով քուրան: Նույն դարի վերջում Հայադվանքի արքա Վաչագան Բարեպաշտը հիմնովին վերանորոգում է հուշարձանը: Հայտնի է, որ Մեսրոպ Մաշտոցը, Հայոց արևելից կողմանց նահանգները գալով, հենց Ամարասից է սկսել հայերեն գրերի տարածումը և, հասկանալի է, առաջին դպրոցն էլ բացել է այնտեղ¹: Պատմաբան Լեոն Մաշտոցի՝ Արցախում կատարած լուսավորչական գործունեության շրջագիծը այսպես է ներկայացնում. «Այդ գծի արևելյան ծայրին մենք տեսնում ենք Աղվանից ամենամեծ սրբավայրը, Ամարասը, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի թոռան՝ նահատակված Գրիգորիսի գերեզմանը: 1223 թ. թաթար-մոնղոլները կողոպտում են Ամարասի հարստությունները, որոնց մեջ էին մտնում նաև IV դարից մնացած Ս. Գրիգորիսի գավազանն ու 36 ակներով զարդարված մի ոսկեծույլ խաչ: Թալանված վանքը XVII դարում Գանձասարի Պետրոս կաթողիկոսի ջանքերով հիմնովին վերակառուցվում և դառնում է եպիսկոպոսական կենտրոն»²: Խամսայի մելիքությունների առաջին շրջանում Ամարասը վերակառուցվում և դառնում է Վարանդայի ամենանվիրական վայրերից մեկը: Վարանդայի մելիք Շահնազար Բ-ն XVIII դարում նորոգում և պարսպապատում է Ամարասը: Նա կառուցում է նաև բազմաթիվ սենյակներ, խուցեր և այլ օժանդակ շինություններ: 1858 թ. շուշեցիների օժանդակությամբ կրկին հիմնովին վերանորոգվում է Ամարասի վանքը: XIX դարի երկրորդ քառորդում այն որոշ ժամանակ որպես մաքսատուն է ծառայել: Այնտեղ էին իջևանում արևելքից դեպի Ռուսաստան և եվրոպական մի շարք երկրներ գնացող առևտրական քարավանները:

Ս. Գրիգորիսի ստորգետնյա դամբարան մատուռը գտնվում է այժմյան եկեղեցու բեմի տակ: Դամբարանը, բացի հարավային մուտքից, ունի նաև մուտք արևելյան կողմից, որն այժմ փակված է: Հարավային մուտքից դեպի ներքև տանող աստիճանների հանդիպակաց պատին կան վաղ միջնադարի հայկական ճարտարապետությանը բնորոշ երկրաչափական ու բուսական զարդանախշեր: Ըստ ճարտարապետ Մուրադ Հասրաթյանի՝ «Հայ ճարտարապետության IV-VI դարերի այդ հետաքրքրական և արժեքվոր ստեղծա-

¹ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 277:

² Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1947, էջ 152:

գործությունների ինքնատիպության, դրանց ձևերի զարգացման էվոյուցիայի բացահայտման գործում կարևոր դեր և նշանակություն ունի Ամարասի Սուրբ Գրիգորիսի դամբարանը որպես այս տիպի որոշակի թվագրված ու ամենալավ պահպանված հուշարձանը»¹:

Ամարասի ներկայիս կանգուն եկեղեցին կառուցվել է 1858 թ. կաթնագույն ֆելզիտի մաքուր տաշած քարով: Այն եռանավ բազիլիկի հորինվածք ունի: Եկեղեցու հարդարանքը թե՛ ներսից և թե՛ դրսից պարզ է: Բացառություն է արևմտյան շքամուտքի ճակատի պատը: Վանքն ունի ուղղանկյուն հատակագծով պարսպապատեր՝ չորս անկյուններում տեղադրված կլոր բուրգերով: Պարիսպների ամբողջ պարագծով ներսում կառուցված են բնակելի և օժանդակ բազմաթիվ շինություններ:

Քռի եղջի հուշարձանախումբը Անահիտի ձորակի ձախ կողմում է փռված: Այժմյան համալիրը բաղկացած է չորս եկեղեցիներից, գավթից, խաչքարերի երեք որմնափակ պահոցներից, քանդված մատուռից, օժանդակ շենքերից և ընդարձակ գերեզմանատնից, որոնք հիմնականում կառուցվել են միջնադարում:

Առաջին եկեղեցին գտնվում է բլրի գագաթի հարավարևելյան կողմում, փոքր է, շարված անտաշ սալքարերով: Գրեթե ամբողջական մնացած միանավ, թաղածածկ դահլիճի հորինվածքով եկեղեցու միակ մուտքը արևմուտքից է:

Երկրորդ եկեղեցին գտնվում է առաջինի հյուսիսային պատին կից, դարձյալ փոքր շինություն է, կառուցված հողմնահարված սպիտակավուն թերթաքարերով: Սա էլ առաջին եկեղեցու նման միանավ բազիլիկ է՝ ուղղանկյուն հատակագծով:

Գավիթը նշված եկեղեցիների համար ընդհանուր է, անմիջապես հարում է երկու տաճարների արևմտյան ճակատապատին: Նրա խաչվող կամարներով հյուսված թաղ-տանիքը հայկական ճարտարվեստի XI-XIII դարերի նվաճումն է, որի «ներքին տարածությունը» հիացնում է միասնությամբ ու ամբողջականությամբ, այն լի է օդով և լույսով և շլացնում է հզոր կամարների թեթևորեն դեպի վեր խոյացող խիզախ գծերով²: Գավիթը, կառուցված լինելով գույգ եկեղեցիների արևմտյան մասում, որոշ չափով ծածկելով զարդանախշերով, խաչքարերով ու բարձրավանդակներով պատած ճակատապատը, միաժամանակ իր մոնումենտալությամբ հակադրվում է եկեղեցիների դեկորատիվությանը, ընդգծում դրանց շքամուտքերի հանդիսավորականությունը ու արտահայտչականությունը:

Չորրորդ եկեղեցին համեմատաբար փոքր է և շարված է կոպտատաշ սալքարերով: Շինության ծածկը փլված է, արևմտյան ճակատը դրսից պատած է տարբեր մեծությամբ տասնյակ խաչքարերով: Արևմտյան մասում

¹ **Հասրաթյան Մ.**, Ամարասի ճարտարապետության համալիրը // «ԼՀԳ», 1975, թիվ 5, էջ 51:

² Տե՛ս **Мнацаканян С. Х.**, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 79:

բացվող միակ մուտքը զարդարված է քանդակներով: Առանձնապես հետաքրքիր լուծում ունի կիսակամար ճակատաքարը: Կենտրոնում խաչ է, շուրջը՝ շախմատաձև զարդեր, իսկ երկու կողմում տեղադրված են մեկական սիրամարգի բարձրաքանդակներ:

Որմնափակ խաչքարերը երեք կողմից շրջափակված են սովորական պատերով, իսկ արևմտյան որմնախորշի մեջ ագուցված են խաչքարեր¹: Առաջին երկու որմնափակ խաչքարերը գտնվում են միմյանց մոտ՝ չորրորդ եկեղեցուց քիչ վերև: Կառուցվածքով և հարդարանքով իրար շատ նման են, յուրաքանչյուրի արևմտյան որմնախորշում տեղադրված են չորսական խաչքարեր: Երրորդ նույնատիպ կոթողը գտնվում է գերեզմանատան ծայրին:

Հին ու նոր ընդարձակ *գերեզմանատանը* կան ուշադրության արժանի շատ տապանաքարեր, որոնք կենցաղային մոտիվներով զարդաքանդակված, վիմագրված են:

Գուչավանքը գտնվում է Տոդասարի և Ճգնավորի լեռան հյուսիսարևմտյան լանջի գոգավորությունում՝ թավուտ անտառներում: Մատենագիտական աղբյուրները հիշատակում են, որ հնագույն ժամանակներում ներկայիս վանքի տեղում կառուցված է եղել մի եկեղեցի, որը եղել է հայտնի ուխտատեղի: Այդ եկեղեցին ավերվել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Հին եկեղեցու հիմքերի վրա, ինչպես մատնանշում են ներկայիս եկեղեցու հյուսիսային պատի վրա գտնվող ընդարձակ արձանագրությունները, Ամարասից այստեղ գաղթած երկու եպիսկոպոս՝ տեր Սարգիս և տեր Վրդանես եղբայրները, կառուցում են գլխավոր եկեղեցին: Շինությունը հիմնադրվել է 1241 թ., ավարտվել է 1246 թ.²: Գուչավանքը իբրև եպիսկոպոսանիստ հիշատակվում է վաղ միջնադարից, իսկ X դարում թագավորանիստ էր Դիզակում հիմնված թագավորության կենտրոնը: XIII դարի կեսերին այն ընդարձակվում է նորանոր շենքերով, իսկ Դիզակի մելիքների, հատկապես մելիք Ավանի իշխանության ժամանակ հասնում է զարգացման գագաթնակետին՝ դառնալով Հայաստանի նշանավոր վանքային համալիրներից մեկը:

Գլխավոր եկեղեցին միջին մեծության է՝ արտաքուստ ուղղանկյուն, ներսից՝ խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչ թևերով: Ունի գմբեթավոր դահլիճի հորինված, մեկ զույգ որմնամույթերով և երկհարկ ավանդատներով՝ բեմի կիսաշրջանաձև աբսիդի երկու կողմերում: Եկեղեցին ամբողջովին կառուցված է դեղնագույն, սրբատաշ խոշոր քարերով: Ճարտարապետությունը թե՛ դրսից, թե՛ ներսից պարզ է, ծանրաբեռնված չէ դեկորատիվ զարդաքանդակներով: Եկեղեցին ունի գավիթ, որը ըստ Բարխուդարյանցի «խիստ հին է, քան եկեղեցին»: Այն, բացի հավաքատեղի լինելուց, ծառայել է նաև իշխանական դամբարան:

¹ Տե՛ս **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 168:

² Տե՛ս նույն տեղում, էջ 69-70:

Երկրորդ եկեղեցին հարավային մուտքով կապված է գավթի հետ: Պատերի մեջ դրված են քանդակագարդ և արձանագրված խաչքարեր, որոնցից մեկի վրա նշված է 1000 թվականը:

Գերեզմանատունը տարածվում է վանքի շուրջը, որը մեծ մասամբ ավերված է, հատուկենտ գերեզմանաքարերը թաղված են գետնի մեջ, մեծ մասը ծածկված է հողով, խաչքարերն ընկած են գետնին: Գտնված շրջապատի բնակելի և տնտեսական շենքերի հետ դիտվել է որպես ավարտուն ճարտարապետական համակառույց:

Գտնված մինչև XX դարի սկիզբը եղել է Դիզակի հոգևոր մշակութային գլխավոր կենտրոնը: Այստեղ էին նստում թեմի եպիսկոպոսները, հավաքվում էին նշանավոր բազմաթիվ ծաղկողներ, որոնք տեղի գրչատանը ստեղծել են բազմաթիվ մատյաններ, որոնց մի մասը հասել է մեզ: Այսպիսով, իր ճարտարապետական արժանիքներով Գտնված երկրամասի բազմադարյան ճարտարապետական գանձարանում առանձնահատուկ տեղ ունի այնպիսի կոթողների շարքում, ինչպիսիք են Գանձասարն ու Դադիվանքը:

Հատկանշական է, որ խորհրդային իշխանության տարիներին դեռևս 1960 թ. Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ ստեղծված համատեղ հանձնաժողովն¹ ուսումնասիրություններ է կատարել ԼՂԻՄ-ի և հարակից շրջաններում: Կատարված աշխատանքների արդյունքում ադրբեջանական կողմը, հավաքելով ընդամենը հինգ տասնյակի հասնող արաբատառ վիմագրեր², գիտակցեց ծրագրի իրենց համար անհեռանկար և աննպատակահարմար լինելն ու հրաժարվեց այն շարունակելու անհրաժեշտությունից: Քաղաքական առաջնորդների կարգադրությամբ, տարբեր պատրվակներ հորինելով (ֆինանսական միջոցների բացակայություն, հիվանդություն և այլն), ադրբեջանական կողմը հրաժարվեց աշխատանքների հետագա մասնակցությունից³: Հայկական արշավախումբը, Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ հավաքեց IX-XVIII դարերն ընդգրկող 1071 վիմական արձանագրություն՝ ԼՂԻՄ-ի, հարևան Լաչինի (Քաշաթաղի) ու Քյալբաջարի (Քարվաճառի), Քուրի աջափնյա Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի ու Գետաբեկի լեռնային շրջաններից⁴, որոնք աներկբայորեն վկայում են այն հարուստ պատմաճարտարապետական ժառանգության մասին, որը կերտել է հայ ժողովուրդը Արցախի աշխարհում:

¹ Ալեքսանյան Տ., Միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունը Խաչենի իշխանության տարածքում (խորհրդային և հետխորհրդային շրջան) // Պաշտոնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր աթոռ սրբոյ Էջմիածնի, Մարտ, Ս. Էջմիածին, 2018, էջ 122:

² Нейматова М., Мемориальные памятники Азербайджана XII-XIX веков, Баку, 1981.

³ Գրիգորյան Գ., Ակնավոր վիմագրագետը // «ԼՀԳ», 2005, թիվ 3, էջ 191-192:

⁴ Ալեքսանյան Տ., նշվ. աշխ., էջ 123:

**Ալիկ Ղարիբյան, Ռուզաննա Մելքոնյան – Լեռնային Ղարաբաղի
համերապետության պատմաճարտարապետական մի շարք հուշարձանների
ծագումնաբանության շուրջ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բավականին հարուստ է բազմաթիվ և բազմազան հուշարձաններով, որոնք տարբեր դարաշրջանների են պատկանում: Մա բացատրվում է նրանով, որ Արցախը հնագույն ժամանակներից ի վեր պայքարել է իր գոյատևման, ազատության և լուսավոր ապագա կերտելու համար: Մեզ հասած վանքային համալիրները քարե վկաներ են, որոնք գալիս են հեռվում մնացած պատմության ակունքներից և արտացոլում են սերունդների աշխարհիկ և հոգևոր կյանքը, երկրամասի բազմադարյան պատմությունը: Հարկ է նշել, որ վերը նշված հուշարձանները թեև ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, բայց բոլորն էլ միանշանակ կրում են հայ ճարտարապետության ավանդույթները, կառուցողական ձևն ու ոճը տարածված են եղել ինչպես Արցախ-Ղարաբաղի, այնպես էլ հարևան Սյունիքի բնակավայրերում: Այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ կառուցման ժամանակ հայ շինարարներն օգտագործել են իրենց հին ավանդույթները և դրանով իսկ վերադարձրել գմբեթավոր կառույցների տիպը, որն ամենատարածվածն էր հայ ճարտարապետության նախորդ շրջաններում՝ VI-IX և XI-XIII դարերում:

**Алик Гарибян, Рузанна Мелконян – Исторические и архитектурные
памятники в Нагорном Карабахе**

Ключевые слова – Историко-архитектурный памятник, кладбище, камень с разным изображением креста, протокол, колокольня, реконструкция, часовня, подсобное здание, притвор

Нагорно-Карабах богата многочисленными и разнообразными памятниками, которые принадлежат к разным историческим периодам. Это объясняется тем, что Арцах боролся за выживание, свободу и светлое будущее с древних времен. Существующие древние церковные комплексы, те которые приходят из отдаленных источников отражают остальную часть истории, светской и духовной жизни поколений региона многовековой истории. Следует отметить, хотя, вышеупомянутые памятники имеют свои особенности, но все они несут традиции армянской архитектуры, как в Нагорном Карабахе, так и в соседнем Сюник-Зангезуре. В этом контексте, есть тот факт, что во время строительства армянские строители использовали свои старые традиции и, таким образом, вернулась структура куполообразного типа, которая является наиболее распространенной в армянской архитектуре VI-IX и XI-XIII вв.

**Alik Gharibyan, Ruzanna Melkonyan – Historical and Architectural Monuments in
Nagorno-Karabakh**

Key Words – Historical and architectural monument, cemetery, memorial cross, protocol, belfry, reconstruction, chapel, auxiliary building, hall

The Nagorno Karabakh is rich in numerous and very various monuments, which belong to different epochs. This is explained by the fact that Artsakh was struggle for its survival, freedom and a bright future since the ancient times. The monastery complexes are witnesses, which came from the ancient history sources and describe the generation's secular and spiritual life; the region's century-old history. It is relevant to mention, that even though above mentioned monuments have their unique features, these all monuments definitely belong to Armenian

architecture traditions; the structure and the style was common to Artsakh-Karabakh, as well as in neighbour Syunik-Zanezur areas. In this context it is significant the fact, that constructors were operated their old traditions, and this is how they returned the domed structure style, which was the most famous in previous Armenian architecture areas, during VI-IX and XI-XIII centuries.


Նկարներ



Նկ. 1 Գանձասար



Նկ. 2 Հայատառ գրված տեքստ, Գանձասար



Նկ. 3 Գանձասարի մուտքի դուռը



Նկ. 4 Դադիվանք




Նկ. 5 Դադիվանքի գավիթը



Նկ. 6 Դադիվանքի զանգակատունը



Նկ. 7 Դադիվանքի վանքի
հուշահամալիրի ներսում գտնվող XIII
դարի սրբապատկերը



Նկ. 8 Հաթերք թագուհու Արգուի հայոց գրված տեքստը,
Դադիվանք վանքը (XIII դար)



Նկ. 9 Երիցմանկաց վանք



Նկ. 10 Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին



Նկ. 11 Ամարաս



Նկ. 12 Բոհի Եղցի



Նկ. 13 Գտչավանք



Նկ. 14 Գտչավանքի վանական
համալիրի գավթի դռան կողքին
ագուցված խաչքար

Ներկայացվել է 22.03.2021

Գրախոսվել է 07.04.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021